Պ. Հանապազ վաճառէր, ոչ էր նոր սկսել ընդէր ի սկսբանՆէ ոչ արգիլէցին:

Հ. Հանապազ խրատէլին, բայց յերբ տեսին որ ոչ հրաժարի ի գործոյն, հանին զնա:

Պ. Յերբօր հանին, պարտ էր անցած աշխատանաց վարձն տալ, քոյ զրուցն իրաւ գլնիր, եթէ ի սկսբանՆէ սակարկեալ էյին, թէ եթէ դուն գինի վաճառես՝ ոչ պահեմք զքեզ: Բայց որ այս ուխտն ոչ էր յուխտեալ նոցա այրին այն, ուրեմն պարտ էր հատուցանել զվարձն:

— Երկրորդն, որ փափի դեսբան քահանայ մուսի Ըռըշառն[20] չքաւորեցաւ ի երկիրն Պարսից[21]: Այր ոմն Կարապետ անուն ջանաց, որ ոչ ամօթ լինի փափի անուանն, լցոյց զպակասութիւն դեսբանին, որքան որ պիտոյ էր՝ տվեց: Զկնի ժամանակ, յերբոր ես գնացի ի Հռոմ, տեսի ողորմելի այրն այն անկեալ կայր ի վանն Հայոց[22], անդ կերակրիր, դեռեւս սպասէր, թէ փափն հատուցանէ զպարտն[23]: Ինձ գանկատ արաւ, թէ յիմ տվածն ոչ տան, ես եւս անցայ այն դրամէն, բայց քանիս անգամ զգացուցի փափին, թէ գոնէ տուր վասն Աստուծոյ թօշակ վասն ճանապարհի, որով կարօղ լինիմ /21Ia/ *գնալ յերկիրն իմ: Այն եւս ոչ տան, ահա ծերացայ եւ թշուառացայ եւ այք:*

— Երրորդն. Այր ոմն էրզրումցի Մարկոս անուն մեռանի ի Հաշտարխան, գայ ի էրզրմա[յ] նորին եխպայրն, որոյ անունն Մելքիսէթ որդին զասապ Արութինին, զի տիրիցէ Մարկոսի ապրանաց, որ եւ տիրեց: Զկնի ժամանակաց մեռաւ եւս այս Մելքիսէթն, սնաց ըստակ ի նմանէ 15 թուման: Հաշթարխան նստօղ քափուչին Ֆելիքսն[24] առաւ այն դրամն, թէ յաստ ինձ պիտոյ է, ես գրեմ Թիֆլիսու քափու-

20 Խօսքը Abbe Richard-ի ֆրանսիական արտաքին միսիաների կազմակերպած դեսպանագնացութեան մասին է, որը 1716-1717-ական թթ. Այսրկովկասում եւ Պարսկաստանում ներկայանում էր Պապի դիւանագիտական առաքելութեան անուան տակ: Դեսպանագնացութեան նիւթերը պահւում են Archives du Séminaire des Mission étrangères de Paris-ում (այսուհետեւ՝ AME), որին մեզ յաջողուեց ծանօթանալ 1996 թ.:

21 Ֆրանսիական դիւաններում բազմաթիւ փաստաթղթեր են պահպանուել Ռիշարի դեսպանագնացութեան արած պարտքերի եւ հայերի կողմից փոխհատուցման վերաբերեալ: Նոյն ժամանակուայ դէպի Իրան ուղեւորուող ֆրանսիական մէկ այլ դեսպանի՝ Գարդանի նամակը՝ ուղղուած Ֆրանսիայի Ծովային Խորհրդին, հայերին ունեցած Ռիշարի պարտքերի հատուցման մասին, տե՛ս **Anne Kroell.** *Louis XIV, la Perse et Mascate, pp. 60-61:*

22 Խօսքը 1566 թուականից Պիոս Ե. պապի կողմից հայերին տրուած Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցու եւ Հայոց հիւրանոցի մասին է, ուր հանգրուանում էին քաղաքով անցնող հայ ուխտաւորները (տե՛ս **Մ. Կարապետեան,** *Հռոմի հայ գաղթօջախի պատմութիւնից,*- Պատմա-բանասիրական հանդէս, 1998, թիւ 1-2, էջ 165-178):

23 Իրականում գլխաւոր պարտատիրոջը պէտք էր փնտրել «Ֆրանսիական Արտաքին միսիաների վարժարան»-ում: 1716-ին, երբ Ռիշարը հասաւ Կ. Պոլիս, չնայած եղած պայմանաւորուածութեանը չյաջողեց հանդիպել Սուլխան Սաբայ Օրբելիանին, որն արդէն մեկնել էր Վրաստան: Կ. Պոլսում նոյն ժամանակ շատ խանդոտ էին վերաբերում Պարսկաստան մեկնող ֆրանսիացի դիւանագէտներին: Արդիւնքում մաքսաւորը, որ ծովն էր նետել Ռիշարի ունեցած փաստաթղթերն ու նամակները, զրկւում է կեանքից, քանի որ Ռիշարի համար բարեխօս է հանդիսանում Երեւանի խանը (իմանալով, որ վերջինս իր հետ տանում է նաեւ Պապի նամակը): Միաժամանակ Ռիշարի զգալի դրամական պարտքերը իրենց վրայ են վերցնում մի շարք հայեր, որոնք օգնում են իրեն (տե՛ս AME, vol. 355, p. 231, 276, 293, 297): Ռիշարի նամակներում դիմումնագրեր կան հասցէագրուած Փարիզի Արտաքին միսիաների ղեկավար Բրիզասիէին՝ հատուցելու այն պարտքերը, որոնք ինքն արել էր Արեւելքում: Այդպիսի խնդրագրերից մէկում (1720 թ. 17 սեպտեմբեր) նա խնդրում է հատուցել, ի շարս այլոց, նաեւ իրեն շատ օգտակար եղած Յովսէփ (իր թարգմանն էր), Աղաբաբէ եւ Յարութիւն հայազգի վաճառականների պարտքը (տե՛ս AME, vol. 355, p. 458)

24 Աստրախանում վեղարաւորների գործունէութեան մասին անդրադարձ տե՛ս **Է. Թաջիրեան,** *Աստրախանի հայոց պատմութիւնից (ԺԸ դարի առաջին քառորդ),*- Armenian History Materials in the Archives of Central Europe, Yerevan, 2001, էջ 66-74: